ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շարժական կապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 29.07.2024թ. N 237/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.08.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Զ.Աղաջանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ս.Ավագիմյանը, Ա.Նազարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Զ.Աղաջանյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1" «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ք. Երևան, Ազատության-24/1)

2" «Յուքոմ» ՓԲԸ-ն (ք. Երևան, Դավիթ Անհաղթ 8/4)

3" «ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն (ք. Երևան, Արգիշտի-4/1)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			պլանավորվ ընդհանուր գ ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	Շարժական կապի ծառայություններ	3 977 000	20%	4 772 400	5 050 00
2		«Յուքոմ» ՓԲԸ		4 920 000	20%	4 821 600	
3		«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ		6 000 000	20%	7 200 000	

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. Առաջին տեղը զբաղեցրած «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը, սակայն Հավելված N 1-ը՝ դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև մասնակիցը սխալ է նշել կազմակերպության անվանումը:

2. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՊԵԿ-ԷԱՃՄՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

-Նիստը վերսկսել՝ 2024 թվականի օգոստոսի 16-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Աղաջանյան

Անդամներ՝ Ս. Ավագիմյան

Ա. Նազարյան

Քարտուղար՝ Գ. Ղազարյան